

Կ. ՊՈԼՍԻ «ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՐԲԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ 1919-20 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գոհար Խանումյան

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո կնքված Մուդրոսի զինադադարի¹ 4-րդ հոդվածը նախատեսում էր Ցեղասպանությունից մազապուրծ հայերի վերադարձը Կ. Պոլիս²: Ընդամենը երկու շաբաթում Կոստանդնուպոլսում սկսեցին կենտրոնանալ հայ գաղթականների հոծ խմբեր: Մի քանի տարի անցկացնելով տարագրության մեջ՝ գաղթականներից շատերը տառապում էին տարբեր վարակիչ հիվանդություններով, վերապրածների շրջանում մոլեգնում էր սովը, նրանք չունեին ապրուստի անզամ տարրական միջոցներ: Մաթեոս Էպլիղաթյանը³, անդրադառնալով Կ.Պոլիս վերադարձող հայ տարագիրների վիճակին, նշում է. «Այս վերադարձը հետզհետե կը ստանար երկրորդ աքտորանքի մը համեմատությունները. աննպաստ պայմաններու և ցրտառութեան հետեանքով՝ հիւանդութիւններ և հիւանդութեանց հետեանքով նոյն իսկ մահեր պակաս չէին: Եւ սակայն կարաւանները կը շարունակէին վերադառնալ՝ առանց ընկրկելու նորանոր զոհերու և տաժանքներու առջեւ, անշարժութեան դատապարտելու չափ իրարու վրա խոնուած՝ երկաթուղիի կառքերուն մէջը, մինչեւ անզամ անոնց տանիքներուն վրայ: Կը խճողուէին դպրոցներու մէջ, կը մակաղէն եկեղեցիներու բակը, քարերու վրայ, խղճալի, արգահատելի: Հակառակ իր հասցուած անմիջական օգնութիւններուն, Պոլիսը կազմ ու պատրաստ չէր գանոնք ընդունելու այնպէս ինչպէս որ պէտք էր»⁴:

Հրաշքով վերապրած հայության բեկորներին նոր փորձություններից փրկելու համար 1918 թ. դեկտեմբերին Պոլսում ստեղծվեց «Հայ տարագրելոց կեդրոնական յանձնաժողով»-ը⁵: Հանձնաժողովի գործունեության գլխավոր նպատակն էր կազմակերպել հայ գաղթականների տեղավորման և սննդի մատակարարման հար-

¹ Մուդրոսի զինադադար (30 հոկտեմբերի, 1918). կնքվել է Անտանտի ներկայացուցիչների և Թուրքիայի միջև (տե՛ս «Հայկական հարց» հանրագիտարան, Երևան, 1996, էջ 342):

² Տե՛ս Sir Frederick Maurice, *The Armistices of 1918*, London, New York, Toronto: Oxford University Press, 1943, էջ 85-87:

³ Մաթեոս Էպլիղաթյան (1881-1960) ազգային, հասարակական գործիչ: Սովորել է Կ. Պոլսի իրավաբանական համալսարանում (1903-1908): 1913-ին նշանակվել է Վանի ընդհանուր դատախազ, ապա՝ քաղաքի դատարանի նախագահ: 1914-ին որպես թարգմանիչ աշխատել է նորվեգացի գնդապետ Հոֆի հետ: 1919 թ. հունիսի 14-ին նշանակվել է Կ. Պոլսի Ազգային խնամատարության ընդհանուր տնօրեն: 1920 թ. հուլիսի 3-ից նշանակվել է Հայաստանի Հանրապետության խնամատարության և վերաշինության նախարարության Կ. Պոլսի ներկայացուցիչ: 1923 թ. Կ. Պոլսից տեղափոխվել է Ռումինիա, ապա՝ Հունաստան (տե՛ս Էպլիղաթեան Մ., *Ազգային խնամատարություն, ընդհանուր տեղեկագիր առաջին վեցամսեայ, 1 մայիս 1919-31 հոկտեմբեր 1919*, Բ տպագրություն, Անթիլիաս, 1985, էջ 24-25):

⁴ Էպլիղաթեան Մ., *Ազգային խնամատարություն...*, էջ 24-25:

⁵ Նույն տեղում, էջ 25: Նաև՝ Էպլիղաթեան Մ., *Կեսնք մը ազգիս կեսնքին մէջ, ականատեսի և մասնակցողի վկայութիւններ 1903-1923*, Անթիլիաս, 1987, էջ 156-157:

ցերը: Հանձնաժողովը բաղկացած էր չորս հանձնախմբերից՝ նպաստահավաք, ելևնուից և մատակարարման, տեղավորման և առաքման, առողջապահական:

Հայ տարագիրների շրջանում մեծ թիվ էին կազմում որբերը: Նրանց օգնության գործը կազմակերպելու համար «Հայ տարագրելոց յանձնաժողով»-ի հետ գրեթե համաժամանակյա ստեղծվում է «Հայ որբախնամ»-ը, որն իրականացնում էր հայ որբերի խնամակալությունը⁶: Քանի որ հայկական այս երկու նպաստամատույց միությունների նպատակը նույնն էր՝ հայապահպանության խնդիրը, արտոքից նոր վերադարձած Պոլսո պատրիարք Զավեն Եղիայանի նախաձեռնությամբ որոշվեց միավորվել և համատեղ ուժերով գործել: 1919 թ. փետրվարի 28-ին ստեղծվեց Հայ ազգային խնամատարությունը, որը սկսեց գործել միջազգային Կարմիր խաչին կից⁷:

Հայ գաղթականների ու որբերի օգնության գործը կազմակերպելու համար անհրաժեշտ էին վիթխարի նյութական միջոցներ, ուստի 1919 թ. ապրիլի 11-ին սկսվեց համահայկական Մեծ հանգանակությունը, որին մասնակցության կոչ էր արվել համայն հայությանը: Ազգային խնամատարության կենտրոնական վարչության կոչում ստացավ էր. «Տու՛ր ուրեմն, Հայ ժողովուրդ, քանի որ հրամայողական է պահանջը - տուր քո լուճադ, եւ լիաբու՛նն տուր այս անգամ, չափելով մեծութիւնս աղէտին... Եւ ողորմութիւն չէ՛ տալիքդ. քու պարտքդ է գոր պիտ հատուցանես... Անօ՛ջ է որ Եղեռնի սարսափներէն հրաշքով ազատուող Ազգիդ այդ գաւակները ենթարկուին նոր պատուհասի մը, իրական մահուան. ամօ՛ջ որ նոյն բազմաչարչար հերոս ազգին արիւնը կրողներս թոյլ տանք որ մեր աչքին տակ կորչին անոնք... Վասն զի Հայ Մանուկը ապագան է հայութեան, եւ ապագան յուսածիծաղ: Կեդրոնական վարչութիւն: Ազգային Խնամատարութիւն, Կ. Պոլիս, 15 մայիս, 1919 թ.»⁸:

Համատեղ կոչով հանդես եկան նաև Պոլսի պատրիարք Զավեն Եղիայանը, հայ ավետարանական համայնքի ազգապետ Զենոբ Պեգնյանը և հայ կաթոլիկների պատրիարքական տեղապահ Օգոստինոս արքեպ. Սայեդյանը. «Մենք – հոգեւոր պետերս Տաճկահայաստանի – կու գանք անելցնել թէ անպատասպար եւ անսուղ մնացած **70.000 որբեր եւ 800.000 տարագիրներ** կան դեմ՝ անմիջական խնամքի եւ ձեռնտութեան ակնդետ: Լիայոյս ենք, որ այս պարագան ալ նկատի առնելով եւ կարդալով Ազգ. Խնամատարութեան կողմէ **Հանուր Հայութեան** ուղղեալ սրտագին կոչը, ամէն անհատ անտեղիտալի պարտք մը պիտի սեպէ բովսսիրտ նպաստի յօժարավոյթ իր մասնակցութիւնը բերել վերոյիշյալ հասցէին, ընդունելով մեր օրհնութեանց հետ՝ տառապահիւժ կարօտեալներու խորին շնորհակալիքը»⁹:

Սակայն ինչպես իր հուշերում նշում է Զավեն պատրիարքը, կամովին կատարված հանգանակությունները չէին կարող բավարարել հայ գաղթականների և որբերի կարիքները, ուստի 1919 թ. սեպտեմբերին Կ. Պոլսի Ազգային երեսփոխա-

⁶ Նույն տեղում, էջ 51:

⁷ Զաւէն Արքեպս., *Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ*, Գահիրէ, տպարան «Նոր Աստղ», 1947, էջ 280:

⁸ Էպլիդաթեան Մ., *Ազգային խնամատարութիւն...* , էջ 74:

⁹ Նույն տեղում, էջ 75:

նական ժողովն ընդունում է օրենք, որի համաձայն՝ յուրաքանչյուր հայ պարտավոր էր իր նյութական կարողության չափով վճարել «Հայրենիքի տուրք» երկու տարբերակով՝ միանվագ կամ ամսական: Պատրիարքարանն այդ տուրքի ստացագիրն էր պահանջում որևէ հարցով իրեն դիմողներից և չէր օժանդակում տուրքը չվճարողներին: Նույն կերպ էին վարվում Կ. Պոլսի եկեղեցիների թաղական խորհուրդները, որոնք մերժում էին մկրտության, ամուսնության և հուղարկավորության արարողությունների համար իրենց դիմող այն թաղայիններին¹⁰, որոնք «...նիթական կարողություն ունէին և չէին ներկայացներ «Հայրենիքի տուրք»-ի ստացագիրը»¹¹: Այս կապակցությամբ Զավեն պատրիարքը նշում է. «Ազգային խնամատարությունը ունեցաւ Կ. Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ մասնաճիւղեր եւ հաստատեց գաղթականաց կայաններ եւ որբանոցներ, սակայն տեսնելով որ հանգանակութիւններով ու նուէրներով կարելի չէր այս տեսակ ընդարձակ գործ մը մատակարարել, 1919 սեպտեմբերին սկիզբը Ազգային երեսփոխանական ժողովը օրէնք մը քուէարկեց, որուն համաձայն վաստակի տէր ամէն Հայ անհատ պարտաւոր էր իր նիթական կարողութեան չափով տուրք մը վճարել այդ ամիսէն սկսեալ: Ասով պիտի հոգացուէին պէտքերը այն ազգակիցներուն, որոնք թշուառ եւ անպատասպար մնացած էին, մինչև որ կարենային վերահաստատուիլ իրենց հայրենիքին մէջ: Այս պատճառով այս տուրքը «Հայրենիքի տուրք» կոչուեցաւ...»¹²:

Ջինսդադարի հաստատումից մինչև 1921 թ. դեկտեմբերի վերջը հավաքագրվեց ավելի քան 1.5 մլն օսմանյան ոսկի¹³. այդ գումարն ուղղվեց հայ տարագիրների և որբերի օգտին: 1920 թ. դեկտեմբերի 30-ին «Ճակատամարտ» օրաթերթում տպագրվում է Զավեն պատրիարքի կազմած՝ որբերի փրկության ծրագիր-հրահանգը, որն ուղղված էր Որբախնամի թաղային մասնաճյուղերին: Դրանում տեղեկացվում էր, որ որբերի փրկության կենտրոնական մարմնի որոշմամբ Կաղանդից մինչև Ս. Ծ՛նունդ (դեկտեմբերի 31-ից հունվարի 6-ը) ընկած ժամանակահատվածը հռչակված էր «Որբերի փրկության շաբաթ»: Առաջարկվում էր պոլսահայությանը հրաժարվել այդ տոների առթիվ կատարվելիք բոլոր ծախսերից ու նվերներից՝ նախատեսված գումարը հատկացնելով որբերի օգնության սուրբ գործին: Մասնաճյուղերին հրահանգում էին մինչև հունվարի 15-ը կազմակերպել ամանորյա հանդեսներ, որոնցում կընդգրկվեին նաև որբերին և կկազմակերպվեին աճուրդներ՝ հօգուտ նրանց¹⁴:

Այդ օրերին հայապահպանության կարևոր խնդիրներից էր հայության բեկորների մի ստվար հատվածի՝ մահմեդական ընտանիքներում, հարեմներում պահվող հայ կանանց և երեխաների՝ հայկական միջավայր վերադարձնելը: Այդ առաքելու-

¹⁰ Մանրամասն տե՛ս Հովսեփյան Մ., Զավեն Պատրիարքի գործունեությունը Կ. Պոլսի ՀՅԴ մամուլի լուսաբանմամբ (1909-1915, 1918- 1922 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2013, №1, էջ 136:

¹¹ Տե՛ս Զաւէն Արքեպս., *նշվ. աշխ.*, էջ 280-281:

¹² Նույն տեղում, էջ 280:

¹³ Նույն տեղում, էջ 283:

¹⁴ Մանրամասն տե՛ս Հովսեփյան Մ., *նշվ. աշխ.*, էջ 136:

թյունը ստացավ «որբահավաք» անվանումը: Դեռևս Յեղասպանության իրագործման աներևելի փուլում՝ 1915-16 թթ., երբ հայ կանանց և երեխաների վաճառքը ստրկական շուկաներում մեծ հասույթ էր բերում թուրքերին, քրդերին, չերքեզներին, որբահավաք առաքելությունն սկսեցին իրագործել հայ կամավորականները՝ հանձինս Սեբաստացի Մուրադի, Զորավար Անդրանիկի և այլոց: Հենց այս շրջանում կյանքի կոչվեց «մեկ հայ՝ մեկ ոսկի» կարգախոսը: Զինադադարից հետո որբահավաքն ավելի կազմակերպված բնույթ կրեց. այն սկսեցին իրականացնել հայկական նպաստամատույց կազմակերպությունները և հայոց եկեղեցին նախ Պոլսում և նրա հարակից շրջաններում, ապա նաև կայսրության այլ հատվածներում, որտեղ աստիճանաբար սկսում էին վերադառնալ հայության բեկորները: Անդրադառնալով որբահավաքի կարևորության խնդրին՝ Ազգային խնամատարության ընդհանուր տնօրեն Մաթեոս Էպլիդաթյանը նշում է. «Չափազանցություն ըրած պիտի չըլլանք, երբ ըսենք, թե՛ Պոլսոյ մէջ հագուադէպ է գտնել թուրք տուն մը, ամենէն համեատին ամենէն փարթամը, ուր հայ որբ մը կամ մանաւանդ հայ որբուհի մը պահուած չըլլայ: Ու ասոր պատճառը երկուք է. անհատական եւ համայնական: Անհատական՝ որովհետեւ կ'ունենան իրենց տան մէջ ձրի ծառայ մը՝ սեղանի փշրանքներովը պահուող. համայնական՝ որովհետեւ ըստ իրենց հաւատալիքներուն, հոգեպէս փրկած կ'ըլլան զանոնք՝ բազմացնելով միանգամայն թրքութեան թիր»¹⁵:

1919 թ. ապրիլի 17-ին Կ. Պոլսում Ազգային խնամատարության կազմում ստեղծվում է Որբահավաք մարմին, որը ղեկավարում էր երիտասարդ ազգասեր Առաքել Չաքրյանը¹⁶: Որբահավաք մարմինը եռանդուն համագործակցում էր հայոց եկեղեցու ներկայացուցիչների և մասնավորապես Զավեն պատրիարքի հետ, որն անձամբ էր վերահսկում որբահավաքի գործը: Պոլսոց հայոց պատրիարքը նշում է. «... հազարավոր հայ մանուկներ գաւառներու մէջ Թուրքերու տունները ցրուած էին, մեծ մասամբ իբրեւ ծառայ, քիչեր՝ որդեգիր եւ չափահաս աղջիկներ՝ իբր կին: Զինադադարէն անմիջապէս ետքը այս որբերը որքան կարելի է հաւաքել եւ ազգին դարձնել առաջին պարտականութիւններէս մէկը նկատեցի, ոչ միայն իբրեւ Պատրիարք, այլեւ իբր հայ անհատ»¹⁷:

Որբահավաք մարմնի աշխատակիցը՝ «որբախոյզը», պատրիարքաբանի հաղորդած տեղեկությունների համաձայն, ստուգում էր այն հասցեները, որտեղ բռնությամբ պահվում էին հայ որբերը և երիտասարդ կանայք: Որբախոյզներն իրենց գործի հենց սկզբում լուրջ խնդիրների առաջ կանգնեցին. որբերից շատերը բռնի թրքացվել, կրոնափոխվել էին մանուկ հասակում, նրանցից շատերը չէին հիշում իրենց իրական ծնողներին, սեփական անունը, ծննդավայրը, տարիքը:

¹⁵ Էպլիդաթեան Մ., *Ազգային խնամատարութիւն...*, էջ 84:

¹⁶ Չաքրյան Առաքել (1885—1954). փարիզաբնակ անվանի գիտնական, քիմիկոս և գյուտարար: 1948 թ. Փարիզի ակադեմիայի ակադեմիկոս: Ֆրանսիական և հունական կառավարությունների կողմից արժանացել է Պատվո լեգեոնի և Սուրբ Գևորգի ասպետական աստիճանների: Վարել է նաև բարեգործական, աղքատախնամ, հոգևոր պաշտոններ:

¹⁷ Զաւեն Արքեպս., *նշվ. աշխ.*, էջ 288:

Առավել չափահասներից ոմանք վախենում էին խոստովանել իրենց հայ լինելը, քանի որ ոչ վաղ անցյալում հենց ազգային պատկանելության համար էին սպանվել նրանց ծնողները, ազգականները:

Հայտնաբերված որբը բերվում էր Որբահավաք մարմնի կենտրոն, որտեղ նրան հարցաքննում էին: Եթե բռնի կրոնափոխված հայ որբը չէր խոստովանում իր ազգային պատկանելությունը, նրան տանում էին «Չեզոք տուն»¹⁸. դա որբերի ինքնությունը պարզելու և հաստատելու համար ստեղծված մարմին էր, որի հանձնախումբը կազմված էր երկու ամերիկացի, մեկ հայ և մեկ թուրք անդամներից: Շաբաթական երկու անգամ հանձնախմբի անդամները ստուգում էին հավաքված որբերի ինքնությունը: Չեզոք տան գործունեությունը խոչընդոտում էին թուրքական ոստիկանությունը և թուրք հասարակությունը: Կային դեպքեր, երբ մահմեդական որդեգիր ծնողների կողմից կեղծվում էին անգամ հայ երեխաների ծննդականները: Այն կրոնափոխված երեխաները, որոնք Չեզոք տանը չէին խոստովանում իրենց հայկական ծագումը, վերադարձվում էին մահմեդական ընտանիքներ: Չեզոք տան պաշտպանությունն ու վերահսկողությունն իրականացնում էր բրիտանական ոստիկանությունը¹⁹:

Չեզոք տան և որբահավաք գործի վերաբերյալ ամփոփիչ հաշվետվություն է ներկայացրել որբահավաք հանձնաժողովի անդամ Ներսես Օհանյանը²⁰ 1920թ. դեկտեմբերին, որում մասնավորապես ասվում էր. «Մինչևի հիմա Պոլսոյ մեջ գտնուած գրեթե 4-5000 որբերէն 3000-ը Հայ ազգ ազատեր է Թուրքերու քովէն»²¹:

Հարկ է նշել, որ որբահավաք աշխատանքների ընթացքում հակառակ գործընթացը երբեք չի իրականացվել, այսինքն՝ թուրք երեխա բռնի չի հայացվել: Սա կարևոր սկզբունք էր Ազգային խնամատարության որբահավաք գործունեության իրականացման ընթացքում. «...մենք թուրքի գառակ մը հայացնելու ոչ մէկ փափաք ունէինք»²²:

Բացի Պոլսից և հարակից շրջաններից, Ազգային խնամատարության կողմից իրականացվող որբահավաք աշխատանքներ ընդգրկեցին նաև Թուրքիայի ներքին գավառները²³, որտեղ գործուղվում էին Խնամատարության շրջանային քննիչները:

¹⁸ Չեզոք տունը գտնվում է Կ. Պոլսի Շիշլի թաղամասում, որի փակվելուց հետո վերաբացվեց Պեպեթի թաղամասում:

¹⁹ Տե՛ս *Constantinople to-day or the Pathfinder Survey of Constantinople; a Study in Oriental Social Life*, By Johnson Clarence Richard, New York, McMilan, 1922, էջ 229:

²⁰ Ներսես Օհանյան. ազգային, հասարակական գործիչ, Ազգային խնամատարության վարչական ժողովի անդամ: Կ.Պոլսում նրան ճանաչում էին որպես «որբերի հայր»:

²¹ Զաւէն Արքեպս, *նշվ. աշխ.*, էջ 292:

²² Էպիֆոթեան Մ., *Կեանք մը ազգիս կեանքին մէջ...*, էջ 185:

²³ Որբահավաք աշխատանքներին մասնակցում էին ոչ միայն հայ անհատները, հայոց եկեղեցին, այլ նաև հունական եկեղեցին և հունական համայնքը: Հատկապես Տրապիզոնում հունաց Խրիստիանթոս մետրոպոլիտն իր հովանավորության տակ վերցրեց անտիրական հայ մանուկներին: Վերջինս, համագործակցելով Պոլսի պատրիարքարանի հետ, ստեղծեց Տրապիզոնի Որբախնամ հանձնաժողով, որը հայ որբերի կարիքները հոգում էր ազգային կալվածքներից գոյացած հատույթներով: Հետագայում այս որբանոցը փոխանցվեց Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատուցյին: Չափազանց որբերի խնամքն իր վրա վերցրեց Տրապիզոնի հայոց

Հայրենի բնակավայրեր վերադարձած Յեղասպանությունից մազապործ հայերի վիճակն այս շրջաններում մտահոգիչ էր և վտանգավոր: Խնամատարության կողմից Գաղաթիայի շրջանի (Յոզղատ, Քեսքին, Ազդաղ Մադեն, Քըր Շեհիր, Պողազլյան) ընդհանուր քննիչ Մկրտիչ Խալապյանը 6 ամսվա ընթացքում (1919 թ. հուլիս-դեկտեմբեր) կարողացավ կանոնավոր որբանոցներ հաստատել և դրանցում պատասպարել մոտ 2500 որբերի²⁴: Անդրադառնալով Մ. Խալապյանի որբահավաք գործունեությանը՝ Մ. Էպիղաթյանը նշում է. «Պ. Խալապյանի քննիչական գործը նախախնամական եղաւ այդ շրջանին համար: Շատ անգամներ, իր կեանքը վտանգելու գնով, գացած էր այնպիսի տեղեր, ուր Օսմանեան իշխանութիւնը անզօր դարձած էր, եւ Համաձայնականներու ազդեցութիւնն ալ գրեթէ անուանական: Ոչ թե ճամբաներու վրայ, այլեւ նոյնիսկ քաղաքներու մէջ տէրն ու տիրականը աւազակներն էին: Պ. Խալապեան մնացած էր հոն այնքան որ կարելի էր մնալ, եւ վերադարձին (հարաւային ճամբով) մազապործ ազատած էր իւր կեանքը»²⁵:

Ներքին գավառներ գործուղված քննիչները տեղեկագրեր էին ուղարկում Ազգային խնամատարության Կ. Պոլսի կենտրոնական վարչություն: Այդ տեղեկագրերը կարևոր փաստագրական տեղեկություններ են պարունակում Յեղասպանության հետևանքով ամայացած հայաբնակ վայրերի բնակչության թվաքանակի, սակավաթիվ վերապորոհների աղետալի վիճակի և միջազգային ու հայկական նպաստամատույց կազմակերպությունների մարդասիրական ձեռնարկների վերաբերյալ:

Որբահավաք Մկրտիչ Խալապյանը Յոզղաթից ուղարկած տեղեկագրում նշում է. «Եռզղատը՝ Հայկական Աղէտին գեհեճակայրն է: Հազիւ ոտքս դրած եմ եկեղեցիին բակը... հարիւրաւոր որբեր ու այրիներ կը հեւան արեւուն տակ... Տասնեակներով կան, որոնք արդէն զգետնուած՝ անշարժ կը պառկին քարայատակին վրայ. կարելի չէ առանց խոռովքի տեսնել անոնց խոռոչացած աչքերը: Գերեզմանէ մը դուրս ձգուած ձեռքեր են կարծես, որ յամբօրէն կը շարժին ճանճերը քշելու համար և ուժասպառ կ'իյնան... Այս 400 վարակեալներուն մէջէն 250ը շրջակայ թուրք գիւղերէն հաւաքուած էին. մնացորդը՝ տեղացի որբեր...»²⁶:

Ազգային խնամատարությունը կարևորում էր նաև Վերին Միջագետքի շրջանում (Ուրֆա, Մարդին, Տիգրանակերտ, Մալաթիա) կատարած որբահավաք աշխատանքները, քանի որ այս վայրեր վերադառնում էին Ռաքքայի, Դեր-Ջորի, Ռաս ուլ-Այնի համակենտրոնացման ճամբարներից փրկված սակավաթիվ վերապործ հայերը: Ազգային խնամատարության լիազոր պատվիրակ Միքզա Քեթենեճյանի տեղեկագրի համաձայն՝ 1920 թ. դեկտեմբերին Ուրֆայում ապաստանել էին 8217 հայ, սակայն սա հարաբերական և օրական փոփոխվող թիվ էր (կապված

առաջնորդարանը փոխանորդ Տ. Գարեգին վարդապետի նախագահությամբ: Նրա նախաձեռնությամբ բացվեցին բազմապրոֆիլ արհեստանոցներ (տե՛ս Էպիղաթեան Մ., *Ազգային խնամատարություն...*, էջ 434):

²⁴ Տե՛ս Էպիղաթեան Մ., *Կեանք մը ազգիս կեանքին մէջ...*, էջ 196:

²⁵ Նոյն տեղում, էջ 196-197:

²⁶ Էպիղաթեան Մ., *Ազգային խնամատարություն...*, էջ 457:

վերապրողների ելումուտից)²⁷: Երբեմնի հայաշատ այս քաղաքում որբահավաք աշխատանքները խոչընդոտում էին թուրքական իշխանությունները և բրիտանական զինվորական հրամանատարությունը: Անդրադառնալով այս խնդրին, որբահավաք Մ. Քեթենենյանը նշում է. «Որբեր հաւաքելու համար ցարդ կիրարկուած մէթոտը սա է.- Պէտք է իմանալ թէ ուրտեղ հայ որբ մը կայ, առանձին թուղթի մը վրայ գրել առեւանգիչին անունը, տունը-տեղը, որբին անունը, քանի տարեկան, ո՞ր տեղացի ըլլալը եւլն., և այս թուղթը ներկայացնել Անգլ. հրամանատարութեան: Այս վերջինը գործը իր միջոցներով չէ՛ որ կը հետապնդէ, այլ ակնարկուած թուղթը կը դրկէ միութեսարըֆին [գավառապետ-Գ. Խ], ան ալ իր կարգին տեղոյն ուստիկանութեան: Յաճախ կանխաւ առեւանգիչին լուր կը տրուի և որբը այդ տունէն հանելով ուրիշ տեղ մը կը դրուի: Յաճախ նոյնիսկ առանց հետապնդելու, «չկայ» կ'ըսեն»²⁸: Մ. Քեթենենյանը նշում է, որ 1919-20թթ. դրությամբ Ուրֆայում, Պերեհիքում, Սրուճում, Ռաս ուլ-Այնում, Բագգայում, Սևերեկում մուսուլմանների տներում և հարեւներում պահվում են շուրջ 40.000 հայ որբեր և երիտասարդ կանայք, ընդ որում կան թուրքեր, որոնք միաժամանակ 7-9 որբ-որբուհիների «տիրակալներ» են: Նրանց հավաքագրելը, ըստ հայ որբահավաքի, հսկայական աշխատատար ձեռնարկ էր²⁹:

1919 թ. կեսերից հայ որբախույզները տարբեր բնակավայրերից հավաքագրած որբերի մեծ մասին բերում էին Կ.Պոլիս, սակայն նրանց գրեթե կեսն արդեն կորցրել էր ազգային ինքնությունը: Ըստ Ջավեն Պատրիարքի հաղորդած տեղեկության՝ 1919 թ. հունիսին Կեսարիայից բերված 220 որբերից միայն 124-ը հայ ճանաչվեցին, մնացած 96ը՝ թուրք³⁰:

Ազգային խնամատարության կազմած վիճակագրության համաձայն՝ 1919 թ. հավաքագրվել է շուրջ 5000 որբ: Նրանց առանձնացնում էին ըստ տարիքային խմբերի. առավել չափահասներին տեղավորում էին արհեստանոցներում, իսկ մանկահասակները տարվում էին որբանոցներ: Որբերին որբանոցներ էին տեղաբաշխում Ազգային խնամատարության որբանոցների կանոնագրի համաձայն, ըստ որի՝ նախքան որբանոց ուղարկելը՝ որբին նախ տանում էին որբերի կայան (հոդված 8), ապա կայանի տնօրենը ցուցակում արձանագրում էր որբին և տալիս Ազգային խնամատարության կողմից սահմանված թվանշանը: Որբանոցում կտրում էին նրա մազերը, ուղարկում բաղնիք, տալիս նոր որբանոցային հագուստ և ենթարկում բժշկական քննության (հոդված 9)³¹: Որբանոցում հայտնվում էին միայն երկկողմանի կամ միակողմանի ծնողագուրկ երեխաները, ովքեր խնամակալներ չունեին, ընդ որում մանրակրկիտ ստուգվում էր երեխաների կարգավիճակը: Որբանոցների ֆինանսական և նյութական միջոցների բաշխումն իրականացնում էր Խնամատարության ելումուտական հանձնաժողովը:

²⁷ Նույն տեղում, էջ 480:

²⁸ Նույն տեղում, էջ 482-483:

²⁹ Նույն տեղում, էջ 482:

³⁰ Ջաւէն Արքեպս., *նշվ. աշխ.*, էջ 298:

³¹ Էպլիդարեան Մ., *Ազգային խնամատարութիւն...*, էջ 109:

Որբերի շրջանում շատ էին տարբեր վարակիչ հիվանդություններով տառապող երեխաները. նրանց Մ. Էպլիդաթյանի նախաձեռնությամբ առանձնացնում էին առանձին շինություններում, իսկ բուժումն իրականացնում էին լավագույն բժիշկները: Հատկապես հիշատակման է արժանի նշանավոր բժիշկ Արշակ Պողոսյանը. դեռ 1915-16 թթ. նա կազմակերպում է Երզնկայի և հարակից շրջանների հայ որբերի բուժումն ու տարհանումը ռազմական գործողությունների գոտուց³²: 1919 թ. Կ. Պոլսում նրան վստահվեց Ազգային խնամատարության որբանոց-հիվանդանոցի ղեկավարումը, որտեղ կարճ ժամանակահատվածում, սուղ դրամական միջոցներով, նա կարողացավ բուժել վարակիչ հիվանդություններով տառապող հայ որբերին³³:

Առողջ որբերին կայանից ուղարկում էին Ազգային խնամատարության որբանոց: Այդ հաստատությունների մեծ մասը տալիս էր կանոնավոր նախակրթարանների կրթություն: Ուսումնական ծրագիրը մշակվում էր հատուկ հանձնախմբի կողմից: Ի դեպ, որբանոցներում աշխատանքի անցան նաև աքսորից վերադարձած հայ մտավորականները՝ որպես ուսուցիչ, տնօրեն, բժիշկ և այլն³⁴: Այս կերպ կազմակերպվում էր Ցեղասպանությունը վերապրածների ավագ սերնդի՝ աշխատանքով ապահովումը:

Երբեմն որբանոցային շենք էին ծառայում հենց հայկական ավերված, պղծված եկեղեցիները, օրինակ՝ Պողոզյանում Ազգային խնամատարության որբանոցի շենք դարձավ տեղի ավերված եկեղեցին, որտեղ ապաստանեցին ավելի քան 500 որբեր. նրանք սեփական ձեռքերով վերականգնեցին եկեղեցին և շենացրին շրջակա տարածքը³⁵: Այն վայրերում, օրինակ՝ Մարզվանում, որտեղ քաղաքական և նյութական պատճառներից ելնելով հնարավոր չէր որբերին ապաստան տալ, որոշվեց նրանց բաշխել հայ ընտանիքների մեջ՝ յուրաքանչյուրի համար վճարելով ամսական 10 ոսկի³⁶:

Ազգային խնամատարությունը որբախնամ գործունեությունն իրականացնում էր հետևյալ սկզբունքով.

1. Որբանոցներ, որոնց ֆինանսական ընդհանուր ապահովումը՝ հաստատության ծախսերը, սննդի մատակարարումը, որբերի խնամքն իրականացվում էր Ազգային խնամատարության կողմից: Ամսական յուրաքանչյուր որբի համար Ազգային խնամատարությունը հատկացնում էր 5-6 ոսկի³⁷: Ստորև բերվող աղյուսակներում ներկայացվում է Խնամատարության որբանոցների որբերի թվաքանակը՝ ըստ Մ. Էպլիդաթյանի կազմած վիճակացույցի.

³² Տե՛ս Սողոմոն Թեղիբեան, *Վերլիշումներ (Թալէաթի ահաբեկումը)*, գրի առավ՝ Վահան Մինսխորեան, Գահիրե, 1953, էջ 90, 101:

³³ Էպլիդաթեան Մ., *Կեանք մը ազգիս կեանքին մէջ...*, էջ 167:

³⁴ Նույն տեղում, էջ 192:

³⁵ Էպլիդաթեան Մ., *Ազգային խնամատարութիւն...*, էջ 461:

³⁶ Նույն տեղում, էջ 431:

³⁷ Աղյուսակում ներկայացվում են միայն Կ. Պոլսի և հարակից շրջանների որբանոցների վիճակագրական տվյալները (տե՛ս Էպլիդաթեան Մ., *Ազգային խնամատարութիւն...*, էջ 107):

N	Որբանոց	Որբերի թիվը 1919թ. հոկտեմբերի դրությամբ
1	Բանկալթի երկսեռ կայան-որբանոց	125
2	Խաս գյուղի արական որբանոց	97
3	Պալաթի երկսեռ որբանոց	168
4	Գում Գաբուի երուսաղեմական իգական կայան-որբանոց	84
5	Ետի Գուլի Ազգային հիվանդանոցում հիմնված արական որբանոց	100
6	Օրթա գյուղի արական որբանոց	93
	Ընդամենը՝	667

2. Հայրենակցական միությունների և ազգային տարատեսակ կազմակերպությունների, միությունների (Հայ բարեգործական ընդհանուր միության, Հայկական կարմիր խաչի, եկեղեցական կառույցների և այլ) որբանոցներ: Այս հաստատություններից շատերը ստեղծվել էին Ազգային Խնամատարության հիմնադրումից առաջ, սակայն չկարողանալով ինքնուրույն ապահովել որբանոցների գործունեությունը՝ օգտվում էին Խնամատարության ֆինանսական օժանդակությունից: Որբանոցներն ունեին իրենց պաշտոնյաները, սակայն հատկացված միջոցների համար հաշվետվություն էին ուղարկում Խնամատարությանը³⁸:

N	Որբանոց	Որբերի թիվը 1919թ. հոկտեմբերի դրությամբ
1	Շիշլիի Գարակյոյյան որբանոց	59
2	Դարոցասեր տիկնանց իգական վարժարան (Նշան- թաշ)	286
3	Հայ Կարմիր խաչի դարձանատուն (Շիշլի), երկսեռ որբեր	61
4	Հայ Կարմիր խաչի հիվանդանոց, երկսեռ որբեր	67
5	Ազգային հիվանդանոցի ջոռտոների երկսեռ որբանոց	185
6	Բերայի Անաղարտ հղության Քերց Ա. Աննա իգական վարժարան	44
7	Մաքրի գյուղի Պեպկայան արական վարժարան	45
8	Սամաթիայի Ս. Աննա իգական վարժարան	119
9	Օրթա գյուղի իգական որբանոց	245
	Ընդամենը՝	1111

3. Ինքնապահ որբանոցներ, որոնց համար Խնամատարությունը տալիս էր մասնակի ֆինանսավորում կամ համագործակցում էր. դրանք հիմնականում Օսմանյան կայսրության տարածքում գործող Մերձավոր Արևելքի ամերիկյան

³⁸ Տե՛ս, Էպիլդաթեան Մ., *Ազգային խնամատարություն...,* էջ 106:

նպաստամատույցի (Near East Relief)³⁹, բրիտանական Լորդ քաղաքագլխի հիմնադրամի (Lord Mayor’s (Armenian) fund) և այլ օտարերկրյա հայանպաստ կազմակերպությունների որբանոցներն էին: (Ազգային խնամատարությունը 1919-1920 թթ. համագործակցում էր Օսմանյան կայսրությունում գործող ոչ միայն օտարերկրյա հայանպաստ կազմակերպությունների, այլև բրիտանական, ֆրանսիական, ամերիկյան կառավարությունների ներկայացուցիչների հետ՝ որբահավաք և որբախնամ առաքելությունն իրականացնելու համար):

N	Որբանոց	Որբերի թիվը 1919թ. հոկտեմբերի դրությամբ
1	Նշան-թաշի արական որբանոց-կրթարան	245
2	Բերայի որբանոց արական(Եսայան վարժարանի մեջ)	118
3	Պեշիկթաշի արական	20
4	Արնավուտ գյուղի երկսեռ որբանոց	11
5	Գատը գյուղի արական որբանոց	89
6	Սկյուտարի երկսեռ որբանոց	95
7	Կետիկ-փաշայի արական որբանոց	37
8	Նարըլ-Գափուի արական որբանոց	61
9	Մաքրի գյուղի երկսեռ որբանոց	70
	ԸՆդամենը՝	746

Միայն Պոլսում 1919 թ. հոկտեմբերի դրությամբ Խնամատարության ծախսերով պահվող որբերի թիվը 2607 էր⁴⁰: Գավառներում Խնամատարության որբանոցներում ապաստան գտած որբերի թվաքանակը հետևյալն էր.

N	Բնակավայրի անվանումը	Որբերի թիվը
1	Քեսկին	200
2	Գըրշեհիր	170
3	Յոպղատ	400
4	Պողապլան	500
5	Ազդաղ Մադեն	140
6	Կեսարիա	500 ⁴¹
	ԸՆդամենը՝	1910

³⁹ Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի աշխատակցուհի միսս Հոլթը խնամում էր Ազգային խնամատարության որբանոցներում՝ Պարտիզակում 170 արական սեռի որբերի, իսկ Նիկոմեդիայում՝ 240 որբուհիների: Միսս Ալենը Բուրսայում խնամում էր 174 որբուհիների (տե՛ս Էպլիդաթեան Մ., *Կեսանք մը ազգիս կեսանքին մէջ...*, էջ 177):

⁴⁰ Էպլիդաթեան Մ., *Կեսանք մը ազգիս կեսանքին մէջ...*, էջ 177, տե՛ս նաև նույնի՝ *Ազգային խնամատարություն...*, էջ 107:

1920 թ. Թուրքիայում քաղաքական իրավիճակը սրվում է: Երբեմնի դաշնակիցների՝ Աստանտի երկրների շահերը կազմալուծվող կայսրությունում հակադրվում են: Թուրքիայում իշխանության եկած նոր քաղաքական ուժը քեմալականները, շարունակում են երիտթուրքերի որդեգրած հակահայկական քաղաքականությունը: Հզորացող քեմալական շարժումը աստիճանաբար Կ.Պոլսից և Թուրքիայի մյուս շրջաններից դուրս է մղում Աստանտի երկրների ներկայացուցիչներին: Քաղաքական լարված իրադրությունը, ծավալվող հույն-թուրքական պատերազմը վտանգավոր իրավիճակ էին ստեղծում Ցեղասպանությունից մազապուրծ հայ գաղթականների և որբերի համար: Հայկական ազգային նպաստամատույց միություններն ու կազմակերպություններն այլևս սեփական միջոցներով և ուժերով չէին կարող ապահովել Օսմանյան կայսրությունում գտնվող Ցեղասպանությունը վերապրածների խնամքն ու ֆիզիկական անվտանգությունը: «Այդ հազարաուր խլեակներուն մէկ օրէն միւսը դարձեալ դահիճներուն առջեւ նետուիլը աւելի քան սարսափեցուցիչ քան մըն էր», - գրում է դեպքերի ականատես Մ. Էպլիդաթյանը⁴¹: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ 1920 թ. Ազգային Խնամատարության տնօրէն Մ. Էպլիդաթյանը, Պոլստ հայոց պատրիարք Զավէն Եղիայանը սկսեցին բանակցություններ վարել Մերձավոր Արևելքի նպաստամատույցի բարձրաստիճան ներկայացուցիչների՝ Չարլզ Վիքրիի և Քոլոնել Քումբսի հետ՝ Ազգային Խնամատարության որբանոցները Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի խնամքին հանձնելու վերաբերյալ: 1920 թ. հոկտեմբերի 1-ին⁴² Թուրքիայի գավառներում Խնամատարության որբանոցների խնամքը հանձնվեց ամերիկյան նպաստամատույցին, քանի որ «այդ կերպով, ամերիկեան դրօշին տակ՝ թուրքերը պիտի չհամարձակին անոնց վնաս հասցնել»⁴³:

Այսպիսով, 1920 թ. վերջին ազգային խոշոր նպաստամատույց կազմակերպություններից մեկի՝ Ազգային Խնամատարության որբանոցները փոխանցվեցին Մերձավոր Արևելքում գործող օտարերկրյա խոշորագույն կազմակերպությանը: Իր գոյության կարճ ժամանակահատվածում՝ 1919 թ. փետրվարի 28 – 1920 թ. հոկտեմբերի 1-ը⁴⁴, Ազգային Խնամատարությունը վերահաս ֆիզիկական բնաջնջումից՝ սովից, համաճարակներից փրկեց հազարավոր հայ տարագիրների, որբերի: Մահմեդական տներից, հարեմներից խնամատարության որբախոյզներն ազատագրեցին հազարավոր կանանց, երեխաների՝ նրանց վերադարձնելով հայկական միջավայր:

⁴¹ Էպլիդաթեան Մ., *Կեանք մը ազգիս կեանքին մէջ...*, էջ 208:

⁴² Էպլիդաթեան Մ., *Ազգային Խնամատարութիւն...*, էջ 495:

⁴³ Էպլիդաթեան Մ., *Կեանք մը ազգիս կեանքին մէջ...*, էջ 209:

⁴⁴ Փաստացի Ազգային Խնամատարությունը իր գործունեությունը շարունակեց մինչև 1920-ական թթ. առաջին կեսը, սակայն այլևս չունեի նախկին ակտիվությունն ու ազդեցությունը:

Կ. ՊՈԼՍԻ «ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՄԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՈՐԲԱՀԱՎԱՔ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1919-20 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գոհար Խանումյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն Հոդվածը ներկայացնում է 1919 թ. Կոստանդնուպոլսում ստեղծված հայկական նպաստամատույց կազմակերպություններից մեկի՝ Ազգային խնամատարության որբահավաք գործունեությունը Օսմանյան կայսրությունում: Ներկայացվում են կազմակերպության ծավալած գործունեության երկու հիմնական ուղղությունները՝ հարեմներում և մուսուլմանների տներում պահվող հայ երեխաների և կանանց ազատագրումը, անապատան, ծնողազուրկ երեխաների հավաքագրումը և տեղաբաշխումը խնամատարության որբանոցներում: Այս կազմակերպության գործունեության շնորհիվ ցեղասպանությունից մազապուրծ հազարավոր հայ որբեր, գաղթականներ փրկվեցին վերահաս ֆիզիկական բնաջնջումից:

Բանալի բառեր՝ Ազգային խնամատարություն, որբեր, որբահավաք, որբախույզ, որբանոցներ, Հայոց ցեղասպանություն, հայ գաղթականներ, Օսմանյան կայսրություն, Կոստանդնուպոլիս, Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց, Զավեն Տեր Եղիայան, «Չեզոք տուն»:

ARMENIAN NATIONAL RELIEF ORGANIZATION'S EFFORTS TO RECLAIM
ORPHANS DURING 1919-1920

Gohar Khanumyan

SUMMARY

This article presents the efforts of the Armenian National Relief (ANR) organization to reclaim Armenian orphans in the Ottoman Empire after WWI. The two main directions of the organization's activity are studies: liberation of the Armenian children and women from Muslim households and institutions and reclamation of the orphans from abandoned places and their distribution in ANR's orphanages.

Due to ANR efforts, thousands of Armenian orphans and refugees were rescued from starvation and annihilation.

Keywords: Armenian National Relief organization, orphans, orphanages, reclamation, orphan rescuer, Armenian Genocide, Armenian refugees, American Near East Relief Committee, Patriarch Zaven Yeghiayan of Constantinople, "Neutral House".

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ БЛАГОТВОРИТЕЛЬНОЙ
ОРГАНИЗАЦИИ ПО ОКАЗАНИЮ ПОМОЩИ СИРОТАМ В 1919-1920 ГГ.

Гоар Ханумян

РЕЗЮМЕ

Рассматривается деятельность Армянской национальной благотворительной организации (АНБО) (основана в 1919 году в Константинополе) оказания помощи армянским сиротам в Османской империи после Первой мировой войны. Представлены два основных направления деятельности организации: освобождение армянских детей и женщин, содержавшихся против своей воли в гаремах и домах мусульман, а также поиск беспризорных детей-сирот в безлюдных и заброшенных местах и распределение их в сиротские приюты АНБО.

Благодаря деятельности АНБО, тысячи армянских сирот спаслись от ассимиляции и *физического уничтожения*.

Ключевые слова: Армянская национальная благотворительная организация, сироты, *собираение сирот, искатель сирот, сиротские приюты, геноцид армян, армянские беженцы, Османская империя, Константинополь, Комитет помощи Ближнему Востоку, Завен Тер-Егияян, «Нейтральный дом».*